

Լյուդվիգ Գ. Վարդանյան  
*Փիլ. գիտ. թեկնածու*  
Վահե Ռ. Պողոսյան

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԻԴԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ\*

**Բանալի բառեր** – լիդերություն, քաղաքականություն, քաղաքական գիտություն, քաղաքական լիդերություն, ղեկավարում, կառավարում, մենեջմենթ, խումբ, կազմակերպություն:

### Մուտք

**Յուրաքանչյուր դարաշրջան գիտության առջև իր խնդիրներն է դնում, իսկ յուրաքանչյուր գիտության կենսունակությունը պայմանավորված է այն խնդիրների լուծմամբ, որոնք ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանը:**

Քաղաքական գիտության խնդիրը ոչ միայն նոր երևույթները ակտիվորեն գնահատելն է, այլև բազմակողմանիորեն ուսումնասիրված քաղաքական գործընթացների ու սուբյեկտների ավելի ամբողջական բացահայտման կարևորումը: Այդպիսի երևույթներից է քաղաքական լիդերությունը:

Հետազոտողները (Ջ. Բերնս, Ժ. Բլոնդել, Ա. Վիլդավսկի, Կ. Գրինտ, Գ. Գյունտեր, Բ. Կելերման, Ռ. Թակեր, Վ. Կարասև, Ն. Շչերբինսկայա, Մ. Մարգարյան և ուրիշներ) վաղուց ուշադրություն են դարձրել քաղաքական լիդերության ուսումնասիրությանը<sup>1</sup>: Թվում է, թե ուսումնասիրության թեման կարելի է փակել և վերջակետ դնել, սակայն իրականության մեջ այս կամ այն երևույթը տարբեր պատմական փուլերում անխուսափելիորեն կերպափոխվում է՝ առաջ բերելով նրա ձևավորման ու զարգացման հետազոտության խնդիրը:

Ներկայումս նույնպես քաղաքական լիդերության ուսումնասիրությունը

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.08.2018:

1 Տե՛ս **Блондель Ж.**, Политическое лидерство: Путь к всеобъемлющему анализу, М., Российская академия управления, 1992. **Шербина Н. Г.**, Теории политического лидерства, М., Изд-во «Весь мир», 2004. **Шаблинский И. Г.**, Политическое лидерство: типология и технология, М., «Новый учебник», 2004. **Коттер Джон**, Истинная роль лидера, «Лидерство» Пер. с англ., 2-е изд., М.: «Альпина Паблишер», 2017. с. 49-72. **Մարգարյան Մ.**, Քաղաքական լիդերություն. Տեսություն և պրակտիկա, Եր., ՀՀ ՊԿԿ, 2017:

հանդես է գալիս որպես քաղաքական գիտության հետազոտական ուղղություններից մեկը: Ընդ որում՝ նմանատիպ հետազոտությունների հեռանկարն ամբողջությամբ կախված է ուսումնասիրվող առարկայի նկատմամբ միջգիտակարգային մոտեցման օգտագործումից: Ահա հենց այս տեսանկյունից քաղաքական լիդերությունը պետք է դիտարկվի փիլիսոփայական-մարդաբանական (անտրոպոլոգիական), սոցիոլոգիական, կոնկրետ պատմական, սոցիալ-հոգեբանական, գործնական-քաղաքական և այլ մոտեցումների հիման վրա: Մոտեցումների բազմազանությունը, որոնք ուշադրությունը սևեռում են տվյալ երևույթի տարբեր կողմերի վրա, թույլ է տալիս իրականացնել նրա ամբողջական ուսումնասիրությունը:

Իրոք, եթե խոսենք քաղաքական լիդերի անհատականությանը բնորոշ որակների մասին, ապա չենք կարող հաշվի չառնել անհատի հոգեբանությունը: Եթե լիդերությունը դիտարկենք որպես հոգեբանական և սոցիալական գործոնների փոխազդեցություն, ապա դա արդեն սոցիալական հոգեբանության ուսումնասիրության ոլորտն է: Սոցիոլոգիան լիդերությունը դիտարկում է սոցիալական ինստիտուտի տեսանկյունից, որն իրականացվում է սոցիումի անդամների շահերի համաձայնեցման միջոցով: Եթե լիդերության հետազոտությունն իրականացնենք որպես քաղաքական երևույթ, որպես քաղաքական հարաբերությունների և գործունեության առանձնահատուկ կողմ, ապա դա արդեն քաղաքագիտության խնդիրն է:

Քաղաքական կառավարման հիմնախնդիրները դեռևս հնագույն ժամանակներից այս կամ այն կերպ անհանգստացրել են շատ գիտնականների, քաղաքական և հասարակական գործիչների: Պետության, հասարակության, տարբեր քաղաքական գործընթացների կառավարման առումով միշտ էլ կարևորվել են անհատը, նրա դերն ու նշանակությունը, այն անհատը կամ, ինչպես առանձին դեպքերում ընդունված է նշել և կիրառել, առաջնորդը (լիդերը), որն օժտված է որոշակի առանձնահատկություններով, առավել ևս քաղաքական իշխանությունն իրականացնելու շնորհով:

Մինչև 20-րդ դարի սկիզբը լիդերության վերաբերյալ գիտական պատկերացում՝ որպես այդպիսին, գոյություն չուներ: Սակայն դիտարկման, նկարագրման և ներըմբռնման (ինտուիցիայի) օգնությամբ քաղաքական միտքը քաղաքականության շրջանակներում մշակել է լիդերության որոշակի բնութագրումներ: Այլ խոսքով ասած՝ քաղաքական միտքը ձևավորել է լիդերության վերաբերյալ որոշակի պատկերացում՝ որպես քաղաքական կյանքի և պատմական գործընթացի ակտիվ բաղադրիչ<sup>2</sup>:

Տարբեր ժամանակների փորձը հաստատում է, որ հասարակության համար անվտանգ ու բարեկեցիկ կյանքի ապահովման, արդյունավետ քաղաքական կառավարում իրականացնելու գործում կարևորագույն դերակատարում ունեն քաղաքական լիդերները:

Ուստի «քաղաքական լիդերություն» հասկացությանն առնչվում է նաև «քաղաքական լիդեր» հասկացությունը: **Քաղաքական լիդեր է նա, որ իշխանություն ունի մարդկանց որոշակի խմբի նկատմամբ, հմուտ է քաղաքական գործունեության մեջ, ունի մշակված ծրագրեր, վճիռներ**

2 Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն. Տեսություն և պրակտիկա, Եր., ՀՀ ՊԿԱ, 2017, էջ 73-202:

**կայացնելու ունակություն, դրանք իրագործելու ընդունակության դրսևորում, յուրահատուկ հատկանիշներ, որոնք նպաստում են կառավարման գործընթացների կազմակերպմանը:**

**1. «Քաղաքական լիդերություն» հասկացությունը և նրա էական գծերը**

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել քաղաքական լիդերությունը նվիրված բազմաթիվ սահմանումների և բնութագրումների: Որպես կանոն՝ հեղինակները նշված սահմանումները տալիս են՝ ելնելով իրենց կատարած հետազոտության եղանակից և նպատակից: Այնուամենայնիվ, հետազոտողների մեծամասնությունը համակարծիք է նրան, որ քաղաքական լիդերության սահմանման և բնութագրման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ բաղադրիչները.

- լիդերի անձնական հատկություններն ու առանձնահատկությունները, այդ թվում նաև նրա բարոյական սկզբունքներն ու մշակութային արժեքները,

- լիդերի հետևորդներին բնորոշ գծերն ու բարոյական-մշակութային բնավորությունը, որոնց հետ լիդերը փոխազդեցության մեջ է,

- ընդհանուր հասարակական և կազմակերպչական համատեքստը, որի ներսում տեղի է ունենում լիդերի և հետևորդների փոխազդեցությունը. դա ընդհանուր մշակույթն է՝ քաղաքական մշակույթը, քաղաքական մթնոլորտը, նորմերն ու ինստիտուտները,

- կոլեկտիվ խնդիրների և նպատակային հարցերի հավաքագրումը, որոնք պատմական կոնկրետ իրավիճակներում հետաքրքրում են լիդերներին և նրանց հետևորդներին<sup>3</sup>:

Քաղաքական լիդերության սոցիո-հաղորդակցային բովանդակության հիմնախնդիրը բնութագրվում է հասկացական մոտեցումներով, որոնք հիմնված են քաղաքական լիդերության հաղորդակցային բնույթի վրա, և որոնք ներկայանում են նրան որպես երևույթ, որը հիմնված է լիդերի շփման և գրավչության, բոլորին իր հետևից տանելու, համոզիչ և ոգեշնչող օրինակ դառնալու կարողության վրա:

Իրական քաղաքական գործընթացները բնորոշող «քաղաքական լիդերություն» և «քաղաքական լիդեր» հասկացությունների երևան գալու և լայն տարածում ստանալու իրողություններին զուգահեռ կարելի է խոսել նաև վերոնշյալ երևույթի պատմական զարգացման մասին: «Քաղաքական լիդերություն» հասկացությունը համապարփակություն ձեռք բերեց ժամանակակից քաղաքական գործընթացների հետազոտման հետ մեկտեղ: Անգլերեն «լիդեր» եզրույթի՝ այլ լեզուների կողմից նույն արտասանությամբ փոխառումը կամ նշված ձևով գործածությունը վկայում է նրա համընդհանրականության, լայն կիրառություն ունենալու մասին:

«Լիդեր» բառն անգլերենից («leader») թարգմանաբար նշանակում է «առաջատար», «ղեկավարող»: «Լիդերությունը» («leadership») հանդես է

3 Տե՛ս **Peele G.**, Leadership and Politics: A Case for a Closer Relationship, "Leadership", 2005, Vol. 1, N 2, p. 192 (187-204).

գալիս որպես ղեկավարի վարքագիծ, որը նպաստում է ենթականերին հավաքագրելուն, ամբողջացնելուն, նրանց ուժերն ու ընդունակությունները դրված նպատակներին ուղղորդելուն:

Քաղաքական լիդերության՝ որպես քաղաքականության առանձնահատուկ երևույթի, ուսումնասիրության ժամանակ հայկական մասնագիտական գրականության մեջ կիրառվում են նաև «լիդեր», նաև «առաջնորդ» եզրույթները: Այս կապակցությամբ ներկայացնենք որոշ ստուգաբանական բացատրություններ: Այսպես՝ «Հայոց լեզվի նոր բառարանում»<sup>4</sup> «առաջնորդ» բառը մեկնաբանվում է որպես «ռահվիրա, առջևից գնացող», «ձանապարհ ցույց տվող», «նախակարապետ»: Ակադեմիկոս Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»<sup>5</sup> առաջնորդ, լիդեր է համարվում առաջին դիրք գրավողը, թեմի եկեղեցական-կրոնական գործերի ղեկավարը, իշխանավորը և այլն: «Առաջնորդ» («լիդեր») բառի բացատրությունը առանձնահատուկ ուշադրություն է գրավում 1969 թ. հրատարակված «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»<sup>6</sup>, որտեղ այն մեկնաբանվում է որպես հասարակական շարժման, երկրի, ժողովրդի, դասակարգի առաջնորդ և այլն:

**Մենք առավել ընդունելի ենք համարում կիրառել «լիդեր» եզրույթը, քանի որ նպատակների և մոտիվացիայի խնդիրն ու դրվածքը դրսևորվում են որպես «լիդերություն» հասկացության անհրաժեշտ հատկանիշ:** Իհարկե, այլ լեզուներում այս հասկացության մեկնաբանման մեջ կան որոշակի նրբություններ, բայց ընդհանուր առմամբ, անգլալեզու «լիդեր» և «լիդերություն» հասկացությունները ընդունվել են շատ երկրներում: Ինչ վերաբերում է «քաղաքական լիդերություն» հասկացության նշանակությանը, ապա այստեղ կարելի է համաձայնել ռուս հետազոտող Ս. Ա. Շտուկինի այն կարծիքի հետ, ըստ որի՝ «տեղի է ունեցել այս հասկացության ընդլայնում, այն ներառում է նաև ղեկավարում, հրամայում, առաջնորդում, կառավարում, գլխավոր դերակատարում, առավելություն և այլն»<sup>8</sup>: Նշված բացատրությունները վերաբերում են նաև քաղաքական լիդերությանը, որը ժամանակակից պայմաններում բնութագրվում է համընդհանուր առանձնահատկություններով և քաղաքական կառավարման նոր ձևի առաջացման պահանջում դիտարկվում է որպես հետադարձ կապ: Պետք է նշել, որ քաղաքական լիդերության հայեցակարգը նաև բնութագրման, նաև սահմանման առումով որոշակի բարդություն է ներկայացնում, քանի որ կախված է ինստիտուցիոնալ, մշակութային և պատմական համատեքստերից և ընդհանուր ու մասնավոր իրավիճակներից<sup>9</sup>:

4 Տես Գնել արքեպիսկոպոս ձերթձեան, Փարամազ Կ. Տոնիկեան և Արտաշես Տէր Խաչատուրեան, Հայոց լեզվի նոր բառարան, հատ.1, «Կ. Տոնիկեան և Որդիք Հրատարակչատուն», Պէրոթ, 1992, էջ 180:

5 Տես Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 1, «Հայաստան» հրատարակչություն, Եր., 1976, էջ 104, 529:

6 Տես Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ.1, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր., 1969, էջ 175, հատ. 2, էջ 410:

7 Տես Блондель Ж., Политическое лидерство: Путь к всеобъемлющему анализу, М.: Российская академия управления, 1992, с. 41:

8 Штуккина Т. А., Феномен политического лидерства, «Вестник МГУ», сер. 12., М., 1994. N 4, с. 23.

9 Տես Блондель Ж., Политическое лидерство: Путь к всеобъемлющему анализу, М., Российская академия управления. 1992.

Հաճախ մասնագիտական գրականության մեջ քաղաքական լիդերությունը տեղականից մինչև ազգային և գլոբալ մակարդակներով դիտարկվում է որպես սոցիալական լիդերության ենթատեսակ:

Լիդերություն գոյություն ունի քաղաքական կազմակերպություններում, բիզնեսում, կրոնում, արհմիություններում, բարեգործական կազմակերպություններում, ոչ ֆորմալ կազմակերպություններում և այլն: Լիդերության գոյության համար պարտադիր է խմբերի առկայությունը, և այնտեղ, որտեղ կա խումբ, կա նաև լիդերություն: Ընդհանուր առմամբ՝ լիդերությունը ներկայացնում է խմբային գործունեության կազմակերպման մեխանիզմներից մեկը՝ ենթադրելով, որ անհատը միավորում, ուղղորդում է ամբողջ խմբին, սպասարկում, աջակցում է այդ գործունեությանը: **Ինչ-որ առումով համընկնելով «կառավարում» և «ղեկավարում» եզրույթներին՝ լիդերությունը միաժամանակ բնութագրում է խմբում կամ կազմակերպությունում հարաբերությունների առանձնահատուկ ձևը:**

Լիդերությունը ներառում է ոչ միայն անձի որակները, լիազորությունները, մոտիվացիան, գաղափարախոսությունը, այլև խմբում փոխհարաբերությունների համակարգը, որի ժամանակ մի մարդը (լիդերը) հանդես է գալիս որոշակի նախաձեռնությամբ, խմբի գործողությունների համար պատասխանատվություն է կրում, իսկ մյուսները (հետևորդները) պատրաստ են որոշակի ջանքեր ներդնել՝ նախատեսված նախաձեռնությունն իրականացնելու համար: Լիդերության ինստիտուցիոնալացումը դրսևորվում է քաղաքականության մեջ, որտեղ մասնակցում են մարդկանց հոծ զանգվածներ՝ հետևելով որոշակի նպատակների<sup>10</sup>:

Լիդերությունը՝ որպես միջխմբային երևույթ, առանձնահատուկ տեղ է գրավում ոչ ֆորմալ հարաբերությունների կառուցվածքում: Այն կապված է ոչ ֆորմալ կառավարման գործառույթի կամ փոխազդեցության հետ, որն առնչվում է մարդու հետ, և որն անհատական ազդեցության հիմքի վրա ստիպում է որոշակի խմբի գործել կամ իրեն պահել՝ համաձայն լիդերի օրինակի: Մարդը, որն իր վրա է վերցնում կամ իրականացնում այդ գործառույթը, հանդես է գալիս որպես լիդեր: Ոչ ֆորմալ լիդերությունը հիմնված է հեղինակության վրա, որը ձեռք է բերվում անհատական հատկանիշների միջոցով: Քաղաքական գործունեության մեջ՝ կազմակերպության շրջանակներում պաշտոնատար անձը ընդունում է որոշումներ և դրանց կատարման համար իրականացնում է վերահսկողություն՝ օգտագործելով իր հեղինակությունը որպես իշխանության իրականացման միջոց:

Լիդերության երևույթը կարելի է դիտարկել մի քանի տեսանկյուններից, ինչպիսին, օրինակ, «լիդեր» և «ղեկավար» հասկացությունների հարաբերությունն է: Լիդերության երևույթը նշված տեսանկյունից մեր ուշադրությունը սևեռում է խմբի ֆորմալ և ոչ ֆորմալ կառուցվածքի գործառական (ֆունկցիոնալ) դերերի հատման կտրվածքին:

«Լիդեր» և «ղեկավար» հասկացությունների հարաբերության հիմնախնդրին ուշադրություն դարձնող արևմտյան առաջին հետազոտողներից մեկը Սեսիլ Ջիբն էր: Վերջինս փորձեց տարբերակել այդ հասկացությունները (Ադյուսակ 1):

<sup>10</sup> Տե՛ս Пугачев В. П., Соловьев А. И., Введение в политологию. 3-е изд., перераб. и доп., М., 2000, с. 167-168:

**Լիդերի և ղեկավարի համեմատական բնութագրումները  
(ըստ Ս. Զիբի)<sup>11</sup>**

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ժ (Ժ-Զ) ԳՐԱՐԻ ԹԻՎ 3 (63), հավիս-սեպտեմբեր, 2018

ՎԿԱ համահայկական հանդես

Լիդերություն	Ղեկավարում
Պայմանավորված է խմբի կողմից տարերային երաշխավորությամբ՝ խմբային ձեռքբերումներում ծավալած գործունեության համար:	Աջակցվում է կազմակերպչական համակարգի կողմից:
Լիդերն արտահայտում է խմբի անդամների շահերն ու ցանկությունները:	Ղեկավարը որոշակի նպատակներ է դնում՝ ելնելով մասնագիտական շահերից և անկախ խմբի դրությունից:
Անհրաժեշտ է հաշվի առնել խմբի զգացողություններն ու միասնական կարծիքը:	Անհրաժեշտություն չկա հենվելու խմբի զգացողության և միասնական կարծիքի վրա:
Լիդերը հանդես է գալիս որպես խմբի անդամներից մեկը:	Ղեկավարի և ենթակայների միջև առկա է սոցիալական որոշակի խզում, որը ղեկավարը ձգտում է պահպանել:
Լիդերին իշխանությամբ օժտում է խումբը:	Ղեկավարը լիազորություններ է ստանում իշխանության ոչ խմբային աղբյուրից:

Հետագայում արևմտյան տարբեր հետազոտողներ, նրանց թվում՝ Ա. Զելեգնիկը, Ուորեն Բենիսը, Զոն Կոտերը, Դեվիդ Ռուկը, Ուիլյամ Տորբերտը և ուրիշներ, նույնպես փորձել են ձևակերպել լիդերների, ղեկավարների և մենեջերների մի շարք տարբերությունները:

Եթե համեմատենք լիդերությունը և ղեկավարումը, ապա լիդերությունը սովորաբար ներկայացվում է որպես հոգեբանական հարաբերությունների բնութագրում, որը ծագում է ըստ **ուղղահայաց սկզբունքի**, այսինքն՝ այդ հարաբերությունն ընկալվում է գերակայության ու ենթակայության տեսանկյունից:

Առհասարակ «լիդերություն» հասկացությունը ծագումնաբանորեն պատկանում է բիհեյվյորիստական գիտակարգին, այդ իսկ պատճառով էլ շատ դեպքերում լիդերություն ասելով հասկացվում է գործունեության տեսակ: Ո՞րն է քաղաքական լիդերության՝ որպես գործունեության տեսակի, առանձնահատկությունը: Քաղաքական ոլորտում լիդերությունը քաղաքական կառավարում է: Այստեղ քաղաքական գործիչը միաժամանակ և՛ համակեցության ղեկավար է, և՛ կառավարչական ուղղահայացի լիդեր-վարչարար: Ընդունված է ասել, որ քաղաքական լիդերությունը կապված է իշխանության հետ, սակայն ֆրանսիացի քաղաքագետ Ժան Բլոնդելն ընդգծում է, որ այն ոչ բոլոր տեսակի իշխանություններին է վերաբերում, այլ այն իշխանությանը, որն իրականացվում է վերևից ներքև<sup>12</sup>: Այսպիսով, խոսքը **իշխանության ուղղահայաց հարաբերությունների** մասին է, այսինքն՝ իշխանությունը հասկացվում է հոգեբանական տեսանկյունից: Քաղաքական լիդե-

11 Տե՛ս **Gibb C.**, Leadership, G. Lindzey & E. Aronson (eds.). The Handbook of Social Psychology. 2-nded. Reading (Mass). Massachusetts: Addison-Weskey, 1969, N 4, pp. 123-156:  
12 Տե՛ս **Блондель Ж.**, Политическое лидерство: Путь к всеобъемлющему анализу. М.: Российская академия управления, 1992:

րության՝ որպես իշխանության, հարաբերության հասկացության կենտրոնում գտնվում է «ազդեցություն» հասկացությունը: Ազդեցությունը քաղաքական լիդերի այնպիսի վարքագիծ է, որը փոխում է նրա հետևորդների գիտակցությունն ու վարքագիծը: Եթե քաղաքական լիդերությունը ազդեցություն գործելու միջոց է, ապա իշխանությունը համակեցության վարքագծի վրա ազդելու հնարավորություն է: Այսպիսով, իշխանությունը և ազդեցությունը հանդես են գալիս որպես քաղաքական լիդերության գործիքներ և հիմնական միջոցներ: Սակայն ինչպես հայտնի է ժողովրդավարական վարչակարգերում ո՛չ կառավարողի ձեռքում կա բացարձակ իշխանություն, ո՛չ էլ լիդերի մոտ բացարձակ ազդեցություն: Դա ընդունված է բացատրել իշխանության գործընթացներին քաղաքացիների ընդգրկվածությամբ, այլ կերպ ասած՝ չնայած «հարաբերությունների ուղղահայացությանը», հասարակությունում գոյություն ունի իշխանության հավասարակշռության էֆեկտ: Քաղաքականությունում գործում է ոչ միայն հետևորդների և լիդերի իշխանական փոխկախվածությունը, այլև լիդերի կախվածությունը հետևորդներից: Սա նշանակում է, որ ժամանակակից քաղաքական լիդերը ստիպված է պահպանել խելամիտ հավասարակշռություն, որ քաղաքացիները բողոքի ակցիաներ չիրականացնեն:

Խմբի գործունեության կազմակերպման ղեկավարումը նշանակում է առաջին հերթին նրա կառավարում: Լիդերը հիմնականում իրականացնում է միջանձնային հարաբերությունների կարգավորումը, իսկ ղեկավարը՝ խմբի՝ որպես որևէ սոցիալական կազմակերպության, պաշտոնական հարաբերությունների կազմակերպումը: Լիդերությունը ծագում է տարերայնորեն, իսկ սոցիալական խմբի ղեկավարը նշանակվում կամ ընտրվում է, ինչն էլ նպատակաուղղված, սոցիալական կառուցվածքի տարբեր բաղադրիչների վերահսկողությամբ իրականացվող գործընթաց է: Լիդերությունն իր բնույթով կայուն չէ, քանի որ լիդերի հանդես գալը մեծապես կախված է խմբի տրամադրվածությունից, իսկ ղեկավարումը առավել կայուն երևույթ է<sup>13</sup>: Ենթականների ղեկավարումը, ի տարբերություն լիդերության, տիրապետում է տարբեր սանկցիաների համակարգի, որոնք, իհարկե, լիդերը չունի:

Սոցիալական լիդերության դասին վերաբերում են լիդերության կազմակերպչական, կրոնական, տեխնոլոգիական և այլ տիպեր, այդ թվում նաև քաղաքական լիդերությունը, որը սոցիալական լիդերության տարատեսակներից մեկն է: Ելնելով նրանից, թե քաղաքական լիդերության շատ չափանիշներ նույնական են սոցիալական լիդերության այլ տեսակներին, մի շարք հետազոտողներ այն դիտարկում են ավելի լայն հասկացության համատեքստում<sup>14</sup>: Ճիշտ է, ցանկացած լիդերություն անխզելիորեն կապված է իրադարձությունների ընթացքի փոփոխման և սահմանման ընդունակության հետ, սակայն քաղաքական լիդերությունն ունի նաև իր առանձնահատկությունը: **Քաղաքական լիդերությունը տարբերվում է սոցիալական լիդերության այլ տեսակներից նրանով, որ լիդերները տիրապետում են իշխանության, այսինքն՝ հնարավորություն ունեն այն կիրառելու**

13 Տե՛ս **Урбанович А. А.**, Психология управления, М., «Харвест», 2005. **Шикун А. Ф.**, Управленческая психология: учеб. пособие. М., «Аспект Пресс», 2002:

14Տե՛ս **Grint K.**, Leadership: Limits and Possibilities, New York: Palgrave Macmillan, 2005:

**սոցիալական ազդեցության եղանակների միջոցով իրադարձությունների ընթացքը փոխելու գործընթացում**, օրինակ՝ ազդեցության, հեղինակության և համոզմունքի, նյութական և հոգևոր խրախուսման, բռնության միջոցով (այսինքն՝ ուժ կիրառելու սպառնալիքի և հարկադրանքի միջոցով): Քաղաքական լիդերությունը սոցիալական լիդերության այլ տեսակներից ավելի լայն է, քանի որ հարկադրանքի և ուժի կիրառմամբ բնութագրվում է մենաշնորհային և արտոնյալ «մուտքով»:

Իշխանության հարաբերությունը միշտ անհավասարության հարաբերություն է: Ժ. Բլոնդելի կարծիքով՝ լիդերության համատեքստում իրականացվող իշխանության հարաբերությունը դրսևորվում է յուրահատուկ անհավասարությամբ, քանի որ լիդերները ընդունակ են իրենց խմբի (որոշ դեպքերում նաև ազգի) բոլոր անդամներին անել այն, ինչը նրանք այլ դեպքում չէին անի: Լիդերի տվյալ ընդունակությունը չնչին բացառություններով երկարաժամկետ է: «Այստեղից, - շարունակում է Ժ. Բլոնդելը, - հնարավոր է քաղաքական և հատկապես համազգային քաղաքական լիդերությունը սահմանել որպես իշխանություն, որն իրականացվում է մեկ կամ մի քանի անհատների կողմից այն նպատակով, որ խմբի, ազգի անդամներին ուղղորդի գործողությունների<sup>15</sup>: Այս տեսանկյունից հատուկ նշանակություն է ձեռք բերում քաղաքական լիդերության պաշտոնական կարգավիճակը, որը նրա իշխանության փաստացի հիմքն է:

Կարելի է համաձայնել ռուս քաղաքագետ Ա. Սոլովյովի այն եզրակացության հետ, ըստ որի՝ քաղաքականության մեջ լիդերության երևույթը պետք է ինստիտուցիոնալացման ենթարկվի: Ըստ նրա՝ դա իշխանության առանձնահատուկ ինստիտուտ է, որը թույլ է տալիս առանձին անձին (մարդկանց որոշ խմբի) պետական մակարդակով որոշումների ընդունման գործընթացում իշխանություն ունենալ և հեղինակության առկայության հաշվին թույլ է տալիս վարել առանձնահատուկ քաղաքականություն<sup>16</sup>:

Քաղաքական լիդերությունը՝ որպես ազդեցության յուրահատուկ տեսակ, ընդգրկում է ոչ միայն իշխանության հարաբերությունները, այլև հենվում է հեղինակության, ղեկավարող ազդեցության համոզիչ տեսակների վրա, որոնք ենթադրում են ոչ այնքան կոշտ, միաուղղված ազդեցություն, ինչպես իշխանությունը: Իրոք, քաղաքական լիդերությունը լայն և բազմակողմանի հասկացություն է: Լիդերն ազդեցություն է գործադրում իր հետևորդների դիրքորոշման, հայացքների, սպասելիքների, պահանջների և ցանկությունների վրա, իսկ վերջիններս իրենց հերթին ազդեցություն են ունենում լիդերի վարքագծի, որակների, հույսերի և մոտիվացիայի վրա: Ի վերջո, այս ամենը տանում է շրջապատող քաղաքական միջավայրի փոխակերպմանը:

Չնայած իր համատեքստային տարբերակներին՝ քաղաքական լիդերության գործողը, միևնույն է, իր շրջապատի կամ համատեքստի նկատմամբ միշտ էլ ինովացիայի և հարմարվողականության սոցիալական գործընթաց է, որը մարտահրավեր է նետում ապրելակերպին կամ խմբի արժեքներին:

15 Տե՛ս **Блондель Ж.**, Политическое лидерство: Путь к всеобъемлющему анализу, М., 1992, с 20:

16 Տե՛ս **Соловьев А. И.**, Политология: Политическая теория, политические технологии: учебник, М., 2000, с. 145:



Լիդերի խնդիրների մեջ են մտնում.

- հիմնախնդիրների մեկնաբանումը,
- հիմնախնդիրների լուծման եղանակների առաջադրումը,
- հիմնախնդրի և նրա լուծման անձնական տեսակետի տարածումը և քարոզչությունը,
- հիմնախնդրի լուծման մեխանիզմներն իրագործելու համար համախոհների հավաքագրումը:

Քաղաքական լիդերությունը առանձնահատուկ տեղ է գրավում լիդերության տարբեր տեսակների մեջ, քանի որ նրա ազդեցությունը նշանակալից է հասարակական կյանքի և իրադարձությունների վրա, առնչվում է հսկայական թվով մարդկանց կյանքի խնդիրներին:

Քաղաքական լիդերությունը արժեքների և գաղափարների շուկայում կարող է դիտարկվել որպես մրցակցային քաղաքական գործունեություն իրականացնող երևույթ: Իհարկե, ի լրումն լիդերություն-հետևորդ երկձյուղության (դիխոտոմիայի)<sup>17</sup> հասարակական հիմնախնդիրների մեկնաբանման գործընթացին ներգրավված են էլիտաները, ապաքաղաքական անհատականությունները, ազատ ինտելեկտուալները, տեղական հանրային անդամները և այլն: Սակայն «լիդեր-հետևորդ» խումբն իր էությունը յուրահատուկ է, քանի որ այն ոչ միայն մեկնաբանում է հիմնախնդրային իրավիճակը, այլ նաև մշակում է կոլեկտիվ գործունեության առանձնահատուկ հերթականություն և մարդկանց համախմբում է հանուն սոցիալական խնդիրների լուծման<sup>17</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ սոցիալական կյանքում իրավիճակային մեկնաբանությունները նախապես ծրագրված չեն: Այն պարագայում, երբ քաղաքական դերակատարները հայտնվում են անելանելի և անորոշ իրավիճակներում, քաղաքական լիդերները մեկնաբանությունների փորձեր են մշակում: Այսպիսի փորձերի արդյունքները դառնում են քաղաքական և գաղափարական քննարկման առարկա: Ամեն դեպքում, երբ խնդիրը մուտք է գործում քաղաքական դիսկուրս, քաղաքական լիդերության մեկնաբանական (ինտերպրետատիվային) գործառույթը առաջին պլան է մղվում, իսկ քաղաքական գործունեության ձեռնարկման և կրեատիվության սահմանը ընդլայնվում է մեկնաբանմանը զուգահեռ<sup>18</sup>:

Մեր կարծիքով՝ քաղաքական լիդերության հիմնախնդրի ի հայտ գալու համար անհրաժեշտ են որոշակի քաղաքական պայմաններ և քաղաքական ազատություններ՝ քաղաքական պյուրալիզմի, բազմակուսակցականության, ներկուսակցական և ներխորհրդարանական (ֆրակցիոն) պայքարի առկայության տեսքով, իհարկե, մարդկանց մշտական ինտելեկտուալ-քաղաքական մրցակցության, բազմակարծության և սոցիալական տարբեր խմբերի շահերի և արժեքների արտահայտման պայմաններում:

Վերոնշյալ նախադրյալների բացակայությունը դժվարացնում է դեմոկրատական արժեքների միջոցով նոր լիդերների մուտքը քաղաքականության թատերաբեմ: Սա ակնհայտ է դառնում տոտալիտար և ավտորիտար քաղաքական ռեժիմների օրինակով, որոնց ժամանակ քաղաքական լիդեր որ-

17 Տե՛ս **Tucker R. C.**, *Politics as Leadership*. 2<sup>nd</sup> edn. Columbia MO: University of Missouri Press, 1995:

18 Տե՛ս **Guntern G.**, *The Challenge of Creative Leadership*. London: Shephard-Walwyn, 1997:

պես այդպիսին գոյություն չունի. այն փոխարինվում է դիկտատորներով և կուսակցական նոմենկլատուրայով: Ընդ որում՝ հատկապես նոմենկլատուրայի, այլ ոչ թե լիդերության օրենքներն են ուղղորդում դեպի իշխանական լիազորություններ:

**Այսպիսով, լիդերությունը մեկ անհատի գերիշխանությունն է որոշակի խմբի վրա, որը պայմանավորված է նրա յուրահատուկ ընդունակություններով և խմբի անդամների բարոյական վերաբերմունքով: Ահա այս տեսանկյունից լիդերն իշխանության ձգտող և կամային բարձր որակներ ունեցող, բարոյական հեղինակությամբ և բանախոսական կարողություններով օժտված անհատականությունն է, որը մարդկանց մոտ առաջացնում է սուբյեկտիվ համակրանք և ձգտում՝ հետևելու այդպիսի լիդերին:** «Լիդերություն» հասկացությունը մասնակիորեն հատվում է իշխանության, ղեկավարման, հզորության, մեկնաբանման հետ, սակայն բովանդակում է ինչ-որ բարոյական բաղադրիչներ: Խումբը ճանաչում է լիդերի անձնական գերիշխանությունը և նրա բարոյական հեղինակությունը՝ նրան օժտելով իշխանական լիազորություններով: Հատկապես խմբի անդամների բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ է, որ լիդերը կառավարում է մարդկանց և իշխանություն կրում:

## 2. Քաղաքական լիդերության հիմնական հայեցակարգերը

Քաղաքական լիդերության զարգացման հիմնական փուլերը ներկայացված են ինչպես անտիկ մտածողների, այնպես էլ ժամանակակից տեսաբանների կողմից<sup>19</sup>:

Լավագույն քաղաքական կառավարման խնդիրը, որը կապահովեր հասարակության անվտանգ և առաջընթացային զարգացումը, իր տեղն է գտել պատմության մեջ հայտնի փիլիսոփաների և հրապարակախոսների աշխատություններում (Կոնֆուցիոս, Արիստոտել, Պլատոն, Ն. Մաքիավելի, Թ. Հոբս, Է. Կանտ և ուրիշներ):

Տվյալ հիմնախնդրի ուսումնասիրության նկատելի զարգացումը տեղի ունեցավ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Այդ շրջանում փորձ արվեց քաղաքական լիդերության ձևավորման երևույթը բացատրել հոգեբանական տեսանկյունից (Գ. Լեբոն, Ֆ. Նիցշե, Զ. Ֆրեյդ, Ու. Բուլիտ, Հ. Լասուել և ուրիշներ):

Ավստրիացի հոգեբույժ Զ. Ֆրեյդն (1856-1939) առաջինն էր, որ առաջարկեց հոգեբանական և հոգեվերլուծական մեթոդաբանությամբ նորապես հետազոտել քաղաքական լիդերությունը: Ընդ որում՝ նա հենվում էր իր նախորդների կողմից ներկայացված գաղափարների վրա, ինչպես, օրինակ, ամբոյիսի կազմակերպման և ղեկավարման գործում «առաջնորդների» դերի մասին ֆրանսիացի հոգեբան և սոցիոլոգ Գուստավ Լեբոնի (1841-1931) կողմից ներկայացված մոտեցումն է: «Եթե նույնիսկ որոշ քանակությամբ կենդանի էակներ հավաքվեն մեկտեղ, - գրում է Գ. Լեբոնը, - միևնույնն է, լինի դա կենդանիների հոտ կամ մարդկանց ամբոյս, նրանք բնագոյաբար

19 Այս մասին տե՛ս Սարգսյան Մ., Քաղաքական լիդերություն. Տեսություն և պրակտիկա, եր., ՀՀ ՊԿԱ, 2017, էջ 73-202: Клейменова А., Историческое развитие изучения феномена лидерства, «Аналитика культурыологии», Тамбовский гос. ун-т им. Г. Р. Державина. N 28, 2014, с. 17-22 և այլն:

ենթարկվում են իրենց առաջնորդի իշխանությանը: Մարդկանց ամբոխում առաջնորդը հաճախ լինում է միայն որպես ավագ, բայց բոլոր դեպքերում նրա դերը շատ մեծ է...»<sup>20</sup>: Զ. Ֆրեյդը քաղաքական լիդերների հանդես գալու հիմքում տեսնում էր մարդկանց ենթագիտակցական ձգտումը, իսկ երևույթը նա դիտում էր որպես լիդերի անգիտակցական վարքի և մոտիվացիայի՝ խորքային մակարդակներում գիտակցման արդյունք: Քաղաքական լիդերության բնական սկիզբը, ի տարբերություն սոցիոմշակութայինի, Զ. Ֆրեյդի կողմից դիտարկվում է որպես այդ երևույթի իրական արտահայտություն և մեկնաբանվում քաղաքական լիդերի, նրա վարքագծի մոտիվացիայի ներքին ակտիվությամբ: Հետագայում Զ. Ֆրեյդն ու ԱՄՆ-ի քաղաքական գործիչ Ու. Բուլիտը (1891-1967) առաջինն էին, որ հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների և անգիտակցական ձգտումների հետազոտությունների հիման վրա շարադրեցին ԱՄՆ նախագահներից մեկի՝ Վ. Վիլսոնի հոգեկենսագրությունը: Այդ տեսաբանների կողմից ներկայացված՝ «Թոմաս Վուդրո Վիլսոն, ԱՄՆ 28-րդ նախագահը»<sup>21</sup> վերնագրով աշխատությունը դրեց քաղաքական լիդերության հոգեվերլուծական հետազոտության հիմքը:

Հոգեվերլուծական մոտեցումը շարունակվեց ամերիկյան հոգեբան և քաղաքագետ Հ. Լասուելի կողմից: Վերջինս իր «Հոգեախտաբանություն և քաղաքականություն» աշխատության մեջ նշում է, որ ակտիվ քաղաքական գործունեություն վարելու համար անհատին որպես շարժառիթ է ծառայում ցածր ինքնագնահատումը, անհանգստության զգացումը և անպաշտպանվածությունը, որն ամբողջությամբ որոշում է իշխանությանը տիրելու անհատի պահանջումները<sup>22</sup>: Հ. Լասուելին քաղաքական հոգեբանության մեջ կարելի է համարել նեոֆրեյդիզմի հիմնադիր: Նա և իր համախոհները ընդգծում են, որ իշխանությունը և նրա համար մղվող պայքարը կոչված են բավարարելու հոգեբանական անբավարարվածությունը: Քաղաքական լիդերությունը նեոֆրեյդիզմի կողմից ուսումնասիրվում է երկու ուղղություններով.

- սովորական, կանոնավոր քաղաքական գործչի պայմաններում որպես ներքին որոշ կոնֆլիկտների հաղթահարման միջոց,
- լիդերության երևույթը բխում է լիդերի անհատական հոգեախտաբանական հատկանիշներից, որոնք նրա համար ապահովում են քաղաքական հաջողություններ:

Գերմանացի քաղաքական փիլիսոփա և սոցիոլոգ Մաքս Վեբերը (1864-1920) քաղաքական լիդերի հոգեբանական խնդիրները պայմանավորում էր քաղաքական գործչի կողմից իշխանության խնդիրների հետ կապված շարժառիթային ակտիվության առանձնահատկություններով: «Ով քաղաքականությամբ է զբաղվում, ձգտում է դեպի իշխանության, կամ որպես միջոց՝ որոշ նպատակներ իրականացնելու համար, կամ ուղղակի իշխանություն ունենալու համար»<sup>23</sup>:

Քաղաքական լիդերության հոգեբանական ուղղությունն իր հետագա

20 Տե՛ս **Лебон Г.**, Психология народов и масс, СПб.: «Макет», 1995, с. 234:

21 Տե՛ս **Фрейд З., Буллит У.**, Томас Вудро Вильсон, 28-й президент США. Психологическое исследование, М., 1992:

22 Տե՛ս **Lasswell H.**, Psychopathology and Politics, Chicago, 1931:

23 Տե՛ս **Вебер М.**, Политика как призвание и профессия, Избр. соч., М.: «Прогресс», 1990, с. 646:

զարգացումը ստացավ քաղաքական գիտության բաղկացուցիչ հանդիսացող գիտակարգի՝ քաղաքական հոգեբանության շրջանակներում: Նրա առարկան սահմանվում է այնպիսի հատկանիշներով, վիճակներով և հոգեկան գործընթացներով, որոնք վերափոխվում են իշխանության հետ անհատի փոխազդեցության ժամանակ<sup>24</sup>:

20-րդ դարի երկրորդ կեսին լիդերության թեման ակտիվորեն սկսեց քննարկվել քաղաքական գիտության մեջ: Հանդես եկան Ջեյմս Մակգրեգոր Բերնսի, Ժան Բլոնդելի, Դ. Փեյջի, Արոն Վիլդավսկու, Գ. Գյունտերի, Բ. Կելերմանի, Ռ. Թակերի և այլոց աշխատությունները: Այս հեղինակները փորձում էին քաղաքական լիդերության հիմնախնդիրները լուծել նյութի դասակարգման և ընդհանուր նպատակի համակարգման ճանապարհով: Սակայն նրանց մի մասն իրենց քննարկումներում բավարարվում էին բացատրման նեղ շրջանակներով: Օրինակ՝ Դ. Փեյջը օգտվում էր լիդերության հոգեվերլուծական մոդելից: Նրա համար լիդերությունը որոշ բաղադրիչների՝ անհատականության, նրա դերի, կազմակերպության, խնդիրների, արժեքների, ինստիտուտների զուգակցություն (կոմբինացիա) է: Բ. Կելերմանը, ընդհակառակը, շեշտը դնում էր քաղաքական լիդերության հետազոտության լայն միջգիտակարգային մոտեցման վրա:

Որոշ հետազոտողներ լիդերի վարքագծի դինամիկան դիտարկում էին որպես նրա անհատականության և միջավայրի փոխազդեցություն: Օրինակ՝ Ջեյմս Մակգրեգոր Բերնսը, քաղաքականությունն ըմբռնելով որպես վարքագիծ, «Լիդերություն» աշխատության մեջ հետազոտել է հետևորդների վարքագծի մոտիվացիաները և արժեքները: Ըստ նրա՝ հնարավոր է «լիդեր-հետևորդ» հարաբերության երկու համակարգ և հետևաբար լիդերության երկու տիպ՝ «համաձայնողական» և «տրանսֆորմացվող» («կերպափոխվող»): Առաջինի դեպքում լիդերը և հետևորդները պարզապես առկա արժեքների փոխանակում են իրականացնում: Երկրորդ դեպքում լիդերի կողմից ձևավորվում է հետևորդների մոտիվացիան, երբ նրանց արժեքային կողմնորոշումը տրանսֆորմացվում է դեպի ընդհանուր նպատակը: Հենց այսպիսի լիդերը, նկատի ունենալով զանգվածների սպասելիքները, բարեփոխումներ է իրականացնում<sup>25</sup>: Այս մոտեցման սահմանափակվածությունն այն է, որ լիդերի վարքագծի նման մոդելը չի արտահայտում քաղաքական իրավիճակների ողջ բազմազանությունը: Լիդերության բարոյական այս մոտեցումն առավելապես ուղղված է կազմակերպչական համատեքստի տրանսֆորմացիային (հետևորդների հետ հարաբերությունների բնույթին և կառուցվածքին): Սակայն գլխավոր փոփոխությունները վերաբերում են սոցիումին, որի փոփոխված արժեքները հարմարեցված են շրջակա միջավայրին:

Լիդերային վարքագծի հիմնախնդիրների քննարկումը՝ իրավիճակային փոփոխությունների հետ կապված, շարունակեց ամերիկյան քաղաքագետ Ռոբերտ Թաքերը (1918–2010) «Քաղաքական մշակույթը և լիդերությունը Խորհրդային Ռուսաստանում: Լենինից մինչև Գորբաչով» (1987) գրքում<sup>26</sup>:

24 Տե՛ս **Юрьев А. И.**, Введение в политическую психологию. СПб.: Изд. СПбГУ, 1992, с. 13:

25 Տե՛ս **Burns J. M.**, Leadership, N.Y., 1978:

26 Տե՛ս **Такер Р.**, Политическая культура и лидерство в Советской России. От Ленина до Горбачева, «США: экономика, политика, идеология», 1990, N 1–3:

Քաղաքական լիդերության այս վերլուծության առանձնահատկությունն այն է, որ լիդերության երևույթի համար ընդհանուր համատեքստ է հանդես գալիս քաղաքական մշակույթն ընդհանրապես, և հետագոտվում է Ռուսաստանի հեղափոխական պրակտիկան: Մասնավորապես Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռ. Թաքերը ներկայացնում է որպես մշակութային հեղափոխություն, և մշակութային փոփոխման այդ իրավիճակում էլ իրականացվում է քաղաքական լիդերությունը: Քաղաքականության մեջ լիդերության ելակետային նախադրյալը գործերի այնպիսի վիճակն է, որը սոցիումի մեծամասնության կողմից բացասաբար է ընդունվում: Հենց լիդերն է տվյալ իրավիճակը ներկայացնում որպես արտակարգ խնդիր: Միաժամանակ՝ որպես քաղաքական լուծում, լիդերն առաջարկում է համատեղ գործունեության նոր կուրս: Ըստ Ռ. Թաքերի՝ հասարակական շարժումն առանց լիդերության անհնար է. այն կազմակերպվում, ամբողջացվում է լիդերության երևույթի միջոցով: Ռ. Թակերի կարծիքով՝ քաղաքական մշակույթի ձևավորման գործում էլ լիդերության երևույթը կարևոր դեր է խաղում<sup>27</sup>:

Ի տարբերություն նշված հեղինակների՝ ֆրանսիացի քաղաքագետ Ժան Բյոնդելն իր «Քաղաքական լիդերություն: Ճանապարհ դեպի համընդհանուր վերլուծություն» (1987) աշխատությունում փորձել է ներկայացնել քաղաքական լիդերության միասնական հայեցակարգ: Նա կարծում է, որ անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր դասակարգման մեխանիզմ, որի սկզբունքային հիմքը կդառնա լիդերի ազդեցության ցուցանիշը: Այսպես՝ քաղաքական լիդերության համակարգումը պետք է սկսվի հասարակության վրա լիդերի ազդեցության ուսումնասիրությունից: Օրինակ՝ քաղաքական ռեժիմը ստեղծում է այնպիսի ինստիտուցիոնալ և գործընթացային առանձնահատկություններ, որոնք կօգնեն սահմանել լիդերի նպատակները: Ժ. Բյոնդելը շեշտում է միջավայրի (անկախ փոփոխականի) հատուկ դերը: Միջավայրը մի կողմից սահմանափակումներ է սնոցնում, բայց մյուս կողմից հնարավորություններ է ստեղծում քաղաքական գործչի համար: Այն լիդերին փոփոխությունների հնարավորություն է տալիս, ներառյալ ձգնաժամային իրավիճակները: Քաղաքական իրավիճակների տարածված տարանջատումը սովորականի և բեկումնայինի, իսկ լիդերների բաժանումը «կառավարիչների» («մենեջերների») և «հերոսների», Ժ. Բյոնդելի կարծիքով, չեն արտացոլում փոփոխությունների մասշտաբը: Որոշ լիդերներ ոչ փրկիչներ են համարվում, ոչ հեղափոխականներ, ոչ պատերնալիստներ, ոչ էլ պոպուլիստներ, բայց կարող են լինել լիդերներ՝ համաձայն դիրքի և ղեկավարին հատուկ անձնական հատկանիշների: Փաստորեն Ժ. Բյոնդելն առաջարկում է քաղաքական լիդերի դասակարգման երկու մոտեցում: Առաջինի համաձայն՝ լիդերները տարբերվում են հասարակության վերափոխման կամ պահպանման իրենց ցանկության հիմքով: Երկրորդ մոտեցման համաձայն՝ լիդերները տարանջատվում են «մեծ անհատների» և «քաղաքական գործիչների»<sup>28</sup>:

Քաղաքականության վերաբերյալ ժամանակակից դատողություններն

27 Տե՛ս նույն տեղում:

28 Տե՛ս **Блондель Ж.**, Политическое лидерство: Путь к всеобъемлющему анализу, М: Российская академия управления, 1992, с. 122-131:

ամնչվում են ոչ միայն իշխանության և ազդեցության հասկացություններին, այլև կառավարման վերաբերյալ պատկերացումներին: Ընդունված է համարել, որ լիդերությունը՝ որպես գործունեություն, հաղորդակցության գործընթացի նման թափանցում է կազմակերպության կառավարման ամբողջ համակարգ: Խնդիրն այն է, որ ներկայումս լիդերության պատճառը ոչ միայն պայմանավորված է պաշտոնով, այլև գիտելիքով: Եթե մարդը տիրապետում է գիտելիքի և գիտի, թե ինչպես փոխել տվյալ հիմնարկի, կազմակերպության զարգացումը, ապա նա ընդունակ է դառնալու նաև լիդեր: Այսօր ակտուալ է և դրսևորվում է իշխանության երկու տիպ՝ **գիտելիքի իշխանություն** և **անհատի իշխանություն**: Լիդերության հենց այս գործիքներն են թույլ տալիս լինել արդյունավետ ղեկավար և կառավարիչ՝ ժամանակակից իրավիճակներում, այսինքն՝ ազդեցություն ցուցաբերել և փոխել մարդկանց գիտակցությունն ու վարքագիծը:

### Ամփոփում

Այսպիսով, լիդերության առաջին համակարգված հետազոտությունները կապված են լիդերի անհատական որակների ուսումնասիրությունների հետ: **Լիդերության հատկանիշների բազմաթիվ տեսություններ այս կամ այն չափով տիպավորեցին (մոդելավորեցին) լիդերային անհատին՝ ենթադրելով, որ անհատական որակների որոշակի հավաքածուն ընդհանուր է բոլոր լիդերների, այդ թվում՝ նաև քաղաքական լիդերության համար:** Եթե սկզբում հետազոտողների հետաքրքրությունը լիդերի անհատականության ծագումնաբանությունն էր, ապա 20-րդ դարավերջին ուշադրությունը սևեռվեց լիդերի գործառնությունների մոդելավորմանը: Եվ չնայած հատկանիշների տեսությունը քննադատվում է արդյունքների հակասականության և լիդերային որակների հավաքածուի վերաբերյալ միասնական կարծիքի բացակայության համար, ակնհայտ է, որ լիդերները, այդ թվում՝ քաղաքական լիդերը, պետք է տիրապետեն որոշակի հատկանիշների (խարիզմայի, իրազեկվածության, ակտիվության, նախաձեռնողականության և այլն):

Այս ամենով հանդերձ, քաղաքական լիդերությունը կարելի է սահմանել որպես **մեկ կամ մի քանի անձերի լեգիտիմ գերիշխանություն որոշակի խմբի, կազմակերպության վրա, որը պայմանավորված է նրանց յուրահատուկ ընդունակություններով և խմբի անդամների բարոյական վերաբերմունքով:**

Քաղաքական լիդերության վերաբերյալ հիմնական մոտեցումները տարբեր ժամանակաշրջաններում ներկայացվում են տարբեր տեսանկյուններից: Անտիկ շրջանից սկսած՝ մինչև 19-րդ դարի վերջը, քաղաքական լիդերությունը հիմնականում ամնչվում էր քաղաքական կառավարման (պետության ղեկավարի) խնդիրներին, որը կապահովեր հասարակության անվտանգ և առաջընթաց զարգացումը: 20-րդ դարի սկզբներից փորձ արվեց քաղաքական լիդերության ձևավորման բնույթը բացատրել հոգեբանական տեսանկյունից: Եվ փաստորեն դրվեց քաղաքական լիդերության հոգեվերլուծական հետազոտության հիմքը:

Հետագայում լիդերությունն ակտիվորեն սկսեց քննարկվել քաղաքական գիտության մեջ: Մի դեպքում այն դիտարկվում էր հատկանիշների տեսության խնդիրների համատեքստում, մեկ այլ դեպքում՝ որպես անհատականության, արժեքների, ինստիտուտների զուգակցություն (Դ. Փեյջ), որպես խմբային, իրավիճակային տեսություն (Ջ. Բերնս, Ռ. Թաքեր), որպես վարքաբանական մոտեցում և այլն: Այլ հեղինակներ փորձել են ներկայացնել քաղաքական լիդերության միասնական հայցակարգ՝ ստեղծելով ընդհանուր դասակարգման մեխանիզմ, որի սկզբունքային հիմքը կդառնար լիդերի ազդեցության ցուցանիշը (Ժ. Բլոնդել):

Ներկայումս լիդերության հայեցակարգային քննարկումներում «լիդերություն» և «կառավարում» հասկացությունների հարաբերակցությունը դիտարկվում է առավելապես «կազմակերպման» օրինակով (գլխավորապես բիզնեսում), այսինքն՝ լիդերության քննարկումը կապվում է «մենեջմենթ» հասկացության հետ: Այստեղ առաջին պլան է մղվում գիտելիքի խնդիրը՝ դրսևորելով իշխանության երկու տիպ՝ գիտելիքի իշխանություն և անհատի իշխանություն: Լիդերության հենց այս գործիքներն են ղեկավարին թույլատրում լինել արդյունավետ ղեկավար և կառավարիչ ժամանակակից իրավիճակներում, այսինքն՝ ազդեցություն ցուցաբերել և փոխել նարդկանց գիտակցությունն ու վարքագիծը:

**Լյուդվիգ Գ. Վարդանյան** – գիտական հետազոտությունների բնագավառը՝ քաղաքական գիտություն, քաղաքականության տեսություն, քաղաքական փիլիսոփայություն, քաղաքական գիտության մեթոդաբանություն, քաղաքական հաղորդակցություն, քաղաքական մշակույթ:

**Վահե Ռ. Պողոսյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է քաղաքական գիտությանը, քաղաքական փիլիսոփայությանը, քաղաքական մշակույթին վերաբերող հարցերը:

## Summary

### THE POLITICAL LEADERSHIP AS AN ISSUE OF INVESTIGATION FOR POLITICAL SCIENCE

Ludwig G. Vardanyan  
Vahe W. Poghosyan

**Key words** – politics, political science, leadership, political leadership, management, group, organization.

The article considers political leadership as one of the directions of scientific research in the field of political science. Moreover, the prospect of such research depends entirely on the ability of political science to use the intersystem approach to the subject under study. The article makes an attempt to refer to the combination of the terms “leader”, “head”, the notion of “political lead-

ership” as the most important issue in modern political science.

Conceptual discussions of political leadership are presented in various aspects: (a) the relationship between political leadership and political management (government), b) the complexity of the formation of political leadership in the psychological aspects (psychoanalytic study); c) discussion of political leadership by observing the relationship between the concepts of “leadership”, “rule” and “management”, primarily by organizing “social and political” (social, economic, political, spiritual) and various institution.

Резюме

## ПОЛИТИЧЕСКОЕ ЛИДЕРСТВО КАК ИССЛЕДОВАТЕЛЬСКАЯ ПРОБЛЕМА В ПОЛИТИЧЕСКОЙ НАУКЕ

Людвиг Г. Варданян  
Bare B. Погосян

**Ключевые слова** – политика, политология, лидерство, политическое лидерство, руководство, менеджмент, группа, организация.

В статье рассматривается политическое лидерство как одна из проблем в научных исследованиях в области политологии. Перспектива таких исследований полностью зависит от способности политической науки использовать межсистемный подход к изучаемому предмету. В статье делается попытка обратиться к сочетаниям терминов «лидер», «руководитель», понятию «политическое руководство» как важнейшему вопросу в современной политической науке.

Концептуальные обсуждения политического лидерства представлены в различных аспектах: а) связь между политическим руководством и политическим управлением (правительством), б) сложность формирования политического лидерства в психологическом аспекте (психоаналитическое исследование), в) обсуждение проблемы лидерства путем рассмотрения соотношения между понятиями «руководство», «управление» и «менеджмент», имея в виду в первую очередь организацию различных «общественно-политических» (социальных, экономических, политических, духовных) учреждений.

### REFERENCES

1. **Aristotel**, Politika: [per. S drevnegrech.] / Aristotel, M.: AST: AST MOSKVA, 2010.
2. **Axayan E.**, Ardi hayereni bacatrakan bararan, h. 1, «Hajastan» hratarakchutyun, Erevan, 1976.
3. **Blondel J.**, Politicheskoe liderstvo: Put k vseobemlyushchemu analizu. M.: Rossiyskaya akademiya upravleniya, 1992.

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ժ (ՃԶ) ԳՐԱԻՐ. ԵՐԵՎԱՆ, 2018  
Ժ (ՃԶ) ԳՐԱԻՐ. ԵՐԵՎԱՆ, 2018

ՀՀԿ ԽԱՆԻԿԱՅԻՆ ԿԱՆՈՒՄ



4. **Filonovich S. R.**, Teoriya liderstva i menejmenta: istoriya i perspektivi / S. R. Filonovich // *Sovremenniy menejment*, SPb., SpbgU, 2004.
5. **Freyd Z., Bullit U.**, Tomas Vudro Vilson, 28-y prizident SSHA. Psixologicheskoe issledovanie. M., 1992.
6. **Freyd Z.**, Massovaya psixologiya i analiz chelovechskogo «Y» // «Y» i «Ona». Tbilisi: Merani, 1991.
7. **Fridrix Nicshe**, Ayspes xosec Zradashty (errord veramshakvadc hratarakutyun). Iik-Erevan, 2008.
8. **Gnel arqepiskopos Jerjerean, Paramaz K. Tonikean yev Artashes Ter Xachaturean**, Hayoc lezvi nor bararan, h. 1, K. Tonikean yev Vordiq Hratarakchatun, Peyrut, 1992.
9. **Gobbs T.**, Levafan, ili Materiya, forma i vlast gosudarstva cerkovnogo i grajdan-skogo. Izbrannie proizvedeniya. V 2-x t., t. 2, M., 1964.
10. Jamanakacic hayoc lezvi bacatrakan bararan, h. 1, h. 2, H. Ajaryani anvan lezvi institut: Haykakan SSH Gitutyunneri akademiayi hratarakchutyun, Erevan, 1969.
11. **Kant I.**, Idei vseobshchey istorii vo vseмирno-grajdanskom plane. Ob iznachalnom zle v chelovechskoy prirode. K vechnomu miru, sSoch..v 6 t., M., 1964.
12. **Karasev V. I.**, Fenomen politicheskogo liderstva, M.: Moskovskiy socialno-psixologicheskij institut. 2000.
13. **Kleymenova A.**, Istoricheskoe razvitie izucheniya fenomena liderstva // *Analitika kulturologii. Tambovskiy gos. un-t im. G. R. Derjavina*. 2014, N 28.
14. **Konfuciy**, Lun Yuy. Antologiya mirovoy filosofii, t 1, chast 1, M., 1969.
15. **Kostin A. I.**, Ekopolitologiya i globalistika. M, 2005.
16. **Kotter Djon**, Istinnaya rol lidera // *Liderstvo / Per. s angl., 2-e izd.*, M.: «Alpina Pablisher», 2017.
17. **Lebon G.**, Psixologiya narodov i mass. SPb.: Maket, 1995.
18. **Makiavelli N.**, Tirakal, targ. A. Barsexyan, Er., Hexinakajin hratarakutyun, 210.
19. **Margaryan M.**, Qaxaqakan liderutyun. Tesutyun yev praktika / M. M. Margaryan, Erevan, HHPKA, 2017.
20. **Platon**, Gosudarstvo, Sobr. soch., t. 3., M., 1994.
21. **Pudachev V. P., Solovev A. I.**, Vvedenie v politologiyu. 3-e izd., pererab. I dop., M., 2000.
22. **Shablinskiy I. G.**, Politicheskoe liderstvo: tipologiya i texnologiya, M.: «Noviy uchebnyk», 2004.
23. **Shcherbinina N. G.**, Teorii politicheskogo liderstva. M.: Izd-vo «Ves mir», 2004.
24. **Shikun A. F.**, Upravlencheskaya psixologiya: ucheb. Posobie, M.: «Aspekt press», 2002.
25. **Solovev A. I.**, Politologiya: Politicheskaya teoriya, politicheskije texnologii: uchebnyk, M., 2000.
26. **Shtukina T. A.**, Fenomen politicheskogo liderstva // *Vestnik MGU, Ser. 12*, 1994, N 4.
27. **Taker R.**, Politicheskaya kultura i liderstvo v Sovetskoj Rossii. Ot Lenina do Gorbachova // *SSHA: ekonomika, politika, ideologiya*. 1990, N 1-3.
28. **Tidor S. N.**, Psixologiya upravleniya: ot lichnosti k komande, Petrozavodsk, M., 1997.

29. **Urbanovich A. A.**, Psixologiya upravleniya. M.: Xarvest, 2005.
30. **Veber M.**, Politika kak prizvanie I profesiya // Izbr. Soch. M., Progress, 1990.
31. **Zeleznik A.**, Menejeri I lideri – sinonimi ili antonimi? Osnovnoe otlichie mejdu menejerami I liderami – v ix glubinnix predstavleniyax o xaose i poryadke // Harvard Business Review, M., 2008. N 1-2.